108

1597

Ⓓ 1/718

IX/11

Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԻՒՆ-ԷԶԵՐ

ԿՈՒԼԻ. ՀՈՍՈՅ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՓԼԻՍ ՀԻՄՆ. 1894 ՆՈՐՈՐՋ. 1909 Тиф
основ. 1894 нов. пер. 1909
БИБЛІОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кавк.

A 55994

ՏԻՓԼԻՍ
Արտատիպ Մն. Մարտիրոսեանցի
Գուշկինեան փողոց, № 12.
1903

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՅ
ՖՈՆԴ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Дозв. цензурою. Тифлисъ, 7 августа, 1903 г.

ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ ՀԻՄՆ. 1894 ՆՈՐՈՒՂ. 1909 Тифл.
основ. нов. пер.
Библіотека
Адм. Кавказ. О-ва на Кавк.

Ա.

Ես կուզեմ ոսկեշող արևի ցոլքի մէջ
Անհունի ջինջ ու նինջ դաշտերում դալարուել...
Կամ տուէք կատաղի փոթորիկ ինձ անվերջ,
Նորա դուռ, ահաւոր շնչի մէջ միշտ կուուել...

Օ՜, կուզեմ ես ոգաստ կայծակին էլ նման
Վեհութեան էջերում բոցկլտամ ու ճախրեմ...
Կամ տուէք ինձ անխօս սև ու սուգ գերեզման,
Նորա լուռ կամարի տակ անցու ես փթեմ...

Կամ ոչինչ. կամ բոլորը... Ծպիտ, կամ արցունք,
Ոսկեշող ճառագայթ, կամ գայրոյթ մրրկի,
Անհունի վեհ դաշտերը, կամ մրուր գերեզման,
Կամ վշտի ծով-հեղեղ, կամ երազ ցնորքի...

Օ՜, տուէք ինձի լոյս, կամ կռիւ անդադար,
Կամ անխօս գերեզման, մոռացման սև՜ կամար...

Բ.

Է՞յ գիտի գարնան ոսկեշող օրեր,
Եկաք, շոյեցիք երազի նման.
Մատաղ տենչ-յոյսեր, ցնոր-անուրջներ,
Եկաք ու անցաք անյետ, անդիման...

Որպէս վաղորդեան ժպտուն արշալոյս,
Գգում էիք ինձ անուրջոտ թևով,
Ձեր վառ երազոտ շնչի տակ տենչ յոյս
Ես անում էի սրտումս անխռով...

Ես օտար կեանքին, ես դէպի նորան
Նայում էի միշտ հաւատով անբիծ...
Եւ ահեղ կեանքի աղօտ հեռաստան
Թւում էր ինձի քաղցր, բերկրալից...

Է՞յ գիտի գարնան ոսկեշող օրեր
Եկաք, շոյեցիք երազի նման...
Եւ կեանքս ջիւան ինչ ունէր-չունէր,
Առաք ու անցաք անյետ, անդիման...

Գ.

Թող արտունջ, եղբայր, լուծդ տար անձայն.
Այդպէս է ամէն մի մարդու վիճակ.
Ասա, մեղանից ով չի համաձայն,
Որ կեանքն է ցաւի, վշտի ծով անտակ...

Ով որ ապրել է, կեանքում մտածել,
Եւ ով եղել է հարկատու բախտին,
Ով գիտէ ըզգալ, ըզգալ ու դիտել,
Նա վիշտ կունենայ իր սրտի մէջին...

Դ.

Սև՜-սև՜ ամպեր եկան թափուան
Սար ու ձոր.
Սև՜-սև՜ դարդից եկան լցուան
Սրտիս խոր.
Էն մեծ սարը ամպերու մէջ կը սպայ,
Ա՜խ, իմ սիրտը դարդերու մէջ կը սրայ...
Ջան, քամի ջան, ու ամպերը, քշէ տար,
Ջան, հոգի ջան, ու դարտերս ցրուէ տար...
Դուրս եկ արև, դուրս եկ շուտով, փէլփլան,
Սարի սմբուլ, սարի դօշին ալվան...
Դուրս եկ ջէյրան, դուրս եկ տանից
Ռեզ տեսնամ...
Էրուած սրտիս դատը կսկիծ
Մուռանամ...

Ե.

Հպարտ ու աղատ... ճակատդ բարձրէն,
Ոլորէս զօրադոյն, ամբոխեալ իգիթ,
Էս կեանքը ճնշող խաւարի ծոցէն
Անվախ ու սրի առաջ տար ուղիդ։

Հայեացքդ կանթեղ, անունդ անրիծ,
Հեռու քիզանից դարշ ստրկութիւն...
Կոչման բարձրութեան վեհութեան դաշտից
Ծաղրէր ժանտ բախտի մրուր-դառնութիւն...

Դօստի դուշմանի առաջ պարզերես,
Գէշ-դարշ աշխարհի նամարդ դաւակին,
Ինչ էլ որ լինի, ազատ էլ լինես,
Դու գլուխ չ'տաս, չը տաս բնաւին...

Առաջ, դէպի մարտ, հպարտ, անվեհեր,
Ու կուրծքդ նրկաթ, ու սիրտդ ժէռ քար,
Շէկ շանթի նման բախտի սլաքներ
Թող դան ու զարնեն կրծքիդ չարաչար...

Ովկիանի ափին վիթխարի կանգնած
Սև՞-դև՞ ժայռի պէս անյաղթ կ'մնաս...
Ալեաց պէս, կեանքի վշտերն ու հարուած
Կը դան, կը փարուին կրծքիդ անմնաս...

Զ.

Ծնունդ անհունի, երբայր չէկ չանթին,
Հոգիս հոծ կայծակ ու սիրտս արիւն,
Ու ես հոգու պէս, ու ես ոգու պէս
Կեանքի ոլորտում շրջում եմ անքուն...

Տիեզերքն անկոսպար, եթերը անափ
Մտքիս խորշերում—հոգուս մէջ պարտակ,
Սուրբ սէր եմ տենչում անյագ ու անհաս,
Տենչանքս հզօր, թևերս խորտակ...

Երբ լուռ գիշերին երկինքն աստղաւուն
Անհուն լռութեան ոգի է ցոյում,
Ըղդում է հոգիս սուրբ սէրը անհաս
Ցնոր լռութեան երազ էջերում...

Է.

Առաւօտ գով ու հով ժամերին,
Երբ աղօտ, կիսալոյս է աշխարհ,
Երբ խաղաղ է և ջինջ լալ երկին,
Ու կոչում են ասպղերը իրար,
Երբ ծովակը կէսքուն, կէսարթուն
Վեր-երկինք է յառած, լուռ նայում,
Երբ մժոտ հեռատանը անհուն
Խոր քնից նոր զարթնել է ուզում,
Երբ զովիկ զեփիւռի թեւի տակ
Սգաւոր սօսափում է անտառ,
Եւ երբ նոր է ծագում կապուտակ
Լեռներից արշալոյսն վառ ի վառ,
Հուտ վերկայց, եղբայր իմ տանջահար,
Այդ վսեմ, անժխոր դու ժամին
Բարձրացիր ստուերոտ սարալանջ,
Ու հանգիստ կը դտնէ քո հոգին։

Բ.

Ես մեն մենաւոր վաղորդեան ժամին,
Սրտումս ժէռ քար.
Մտայ ծաղկաբոյր ցօղալատ այգին
Կանաչ ու դալար։
Սահում էր հովիկ դեփիւռը թախծոտ,
Սահում, օրօրում ալ-բալ ու կանաչ.
Հեռում էր կաղնին, սօսափում վշտոտ.
Պիսաբթուն երկրից լսվում էր հառաչ...
Ես տեսայ ինչպէս կամացուկ շուշան
Ցողոտ տատղերին կարօտ էր դրկում,
Եւ ջերմ արցունքի շիթով անմման
Ալ-վարդ թփերն էր ցոյում, արծաթում...

Թ.

Տուր ձեռդ եղբայր, ծով վիշտը կեանքի
Թող մեղի տանջէ, հարուածէ մի տեղ...
Սիրտ սրտի սեղմենք... դժոխք օրերի
Խաւարից նայենք դէպ հեռուն—այնտեղ...

Այնտեղ, ուր կեանքի ժխորն է նիրհում
Մոռացման երգ կամարի տակին,
Ջինջ-նինջ լուսնեան շուրջը անտրտում
Ցոլում է, շոյում յոգնատանջ հոգին։

Ա՜խ, այնտեղ, այնտեղ... դէպի ուր գրից
Անուրջն է անցնում կայծակի նման.
Խանդավառ դարնան դաշտերն անկսկիծ
Փռուած են այնտեղ ազատ, անսահման...

Մեր յոյսն էլ այնտեղ, մեր սէրն էլ այնտեղ
Մոռացման ցնոր, անհ ուն էջերում...
Տուր ձեռդ եղբայր, նայենք միատեղ
Հեռուն—դէպի սուրբ գարունն անտրտում...

Ժ.

Ես կը սիրեմ Ջիւան-կեանքի
Արնոտ դաշտեր,
Ես կը սիրեմ կայծոտ Ջանքի
Մարած կոյտեր։
Ես կը սիրեմ յամառ մտքի
Համար դոհուիլ,
Ես կը սիրեմ հոծ-պատրանքի
Տագնապ տեսնել...
Ես կը սիրեմ բոց-տենջանքի
Ձիրիմ շոյել,
Ես կը սիրեմ սէր-գդուանքի
Մոխիր ցոյել...
Ես կը սիրեմ հուր-կայծակի
Բոցը ծորել,
Ես կը սիրեմ դառ արցունքի
Ծով հեղեղել...
Ես կը սիրեմ դոռ-մրրկի
Զայրոյթ ծծել,
Ես կը սիրեմ սև-դև վշտից
Սարեր նիւթել...

Խաւար ու տագնապ,
Դժոխք ու կայծակ,
Վշտածին կամաբ, լաց-կոծ, հեծեծանք,
Ճանթող բոց-կրակ,
Դաշոյն սրի պէս
Խօսքեր դժնդակ,—
Ահա իմ փափագ, ահա իմ պապակ...

ԺԱ.

Ուղղորդ եմ, դարձիր փուշ-փուշ էս կեանքում,
Ըղձերս խորտակ յոյսերս կործան.
Ընկած չոլէշոլ մենակ, էրերում
Մի խորշ եմ պտտում վերջին հանգստեան...

Ա՜խ, ջիւան կեանքիս անուրջոտ յոյսեր
Դարուն օրերիս վառ փայլը տարաք...
Հրջում եմ վհատ, անյոյս ու անսէր,
Տենչում սև դարուն անցաւ հոգի տակ...

Սե՜-ցաւ աշխարհի նամարդ զաւակներ,
Նամարդ ընկերներ ա՞խ ինձի մոռցան...
Իմ կեանքը թափառ, անտէր, անընկեր,
Ըղձերս խորտակ, յոյսերս կործան...

ԺԲ.

Ես կը սիրեմ անհուն տանջանք
Որ տագնապն է տենչ ու յոյսի,
Եւ կոծ-հառաչ, արնոտ պատրանք,
Որ կռվումն է մութ և լույսի։

Ես կը սիրեմ արիւն ամպեր
Վշտից հիւսուած կրծքի խորշում,
Եւ արցունքի սև՜-դև ժայռեր
Ցցուած սրտի լուռ խորանում...

Ես կը սիրեմ միշտ մեն-մենակ
Ծով վշտերին ականջ դնել,
Ջինջ օրօրով մահու կոչնակ
Լուռ դիշերին հեռուէն լսել...

ԺԴ.

Դաշտային զառ-զառբաբ, ժպտագեղ ծաղիկներ
Ձեզի պէս շողշողալ չեմ ուզում...
Քաղցրախօս իմ բլբուլ, հով ու զով պեպիւռներ
Յոգնած սիրտս երգեր չի տենչում...

Չեմ ուզում քեզի պէս, անտարբեր արեգակ,
Կամ նիրհել, կամ անհոգ արթնանալ.
Դալկածոր, մշտալուռ, սգաւոր լուսինեակ,
Քեզի պէս չեմ ուզում լուռ մնալ...

Խնդճ իմ աղդ, քեզ նման ես կուզեմ տանջահար
Լալ-խոկալ, ծով արցունք հեղեղել...
Սև բախտին հարկաւոր տրորուած իմ եղբայր
Քեզ համար ես կուզեմ արտասուել...

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
Ա.ԿԱԴԵՄԻԱ.
5594
$1.00

ԺԴ.

Ես դժոխք կարդացի իմ երաշ օրերին,
Այն անմիտ խոհերին, յոյսերին այն ցնոր,
Որ ունայն իմ կեանքի ոսկեշող, դեռ չէմքին
Ինձ դիւթում էին միշտ, կախարդում անսովոր...

Ես յոյսեր շեմ ուզում, որոնք միշտ անկատար,
Մժի պէս, սաւառնին կսկծոտ կրծքիս տակ...
Ես ըմպել եմ սև-կեանքը թոյնոտ վշտահար,
Ես գիտեմ, ինչ ասել է յոյսեր ու տենչանք...

ԺԵ.

Դու փորձել ես անքուն գիշերներ,
Խորտակուած սե՜ սրտի հեկեկում,
Եւ հոգու տառապանք ու վշտեր,
Սրտամաշ մութ բանտի անկիւնում...
Դու գիտես, ինչ ասել է տենչալ,
Ու ցնոր անուրջներ փայփայել,
Եւ խեղդող կապանքումը մնալ,
Գերութեան սուգ մրուրը ծծել...

Ես տեսել եմ, գիտեմ այդ բոլոր,
Նորահաս և մատաղ իմ սրտին
Մի նեղ բանտ է եղել սեաւոր
Զահամոլ, փուչ աշխարհը այս սին...
Ես յոյսով միշտ թռել եմ հեռուն,
Անուրջել եմ ես միշտ, անսահման,
Ցանկացել եմ ես միշտ և անհուն
Այժմ յուսնել եմ, հասել թուլութեան...

Ժ.Զ.

Գնում են ալիք, գալիս են ալիք
Մէկմէկուց յուժկու, մէկմէկուց հզօր,
Նետվում են ժայռին, դարկում են ժայռին,
Կռվում են յաւէտ, նրանք չունին անդորր...

Փրփուրը բերնին աղմկում է Ծով,
Ալեզարդ գանգուր թափթփում դէս-դէն.
Պայթում է մրրիկ, սուլում է քամին
Տարերք բնութեան սոկում իրարէն։

Կռիւ է կեանքում, կռիւ հանապազ,
Կռվումն են ոնվում միաբս ու գաղափար,
Կռվումն է Ծնունդ, կռվումն է վախճան,
Այդ է բնութեան օրէնքն անաչառ...

Ցնոր երաղներ, անուրջոտ խոհեր
Անցեալի մժից ելնում են կրկին,
Եւ խիտ խմբովին, որպէս կարապներ
Տանում են ինձի իրանց թեւերին...

Անհեթեթ ըղձեր, խոհ-յոյս ու տենչանք
Անփոքր և ունայն հաւատ անկայուն,
Ոգեշող աւուրց միամիտ բերկրանք
Կորել էք անյետ, դարձել էք աճիւն...

Կանգնած եմ ահա ժայռերի միջև
Ուր ջինջ երեկոն նայում է գաղտուկ...
Ցուշիկ լսվում է լիրան սուգն ու հև,
Ականջ է դնում լուսնիակը անձա՛ւկ...

Մենակ եմ, հեռու կեանքի ափերից,
Ցոգնած է հոգիս... Աշխարհը մոռնամ,
Անտառի գլխով, ամպերի փէշից,
Իմ կեանքը ջիւռն ողբամ ու երգամ...

ԺԸ.

Հեռուէն եկաւ մըժ-դուման,
Եկաւ լցուաւ սար ու ձոր.
Յոյսերս անցան... էլ դարման
Չը կայ սրտիս վիրաւոր...

Առուն կուգայ էն սարէն
Դարդ ու ցաւոտ երգ կասէ.
Ջիւան կեանքիս սդր ու սուգ
Տխուր երգում կը լսուէ...

Հողմի թևին, մըժ-ամպից
Մի ձէն հասաւ ականջիս...
Կեանքն է երաղ—մրմնջաց
Ղարայ խարար սև կեանքիս...

ԺԹ.

Մէրիկ, իմ մէրիկ, տես հիւանդ եմ ես,
Կուրծքս վիրաւոր, հոգիս ուժասպառ,
Երգում եմ հրգեր արնոտ սուգ սրտէս,
Ըղձերս կորած, կեանքս սպասար...

Ա՜խ, ուր են կորել ջիւան իմ կեանքի
Սիրաւատ էջեր... չը կան, էլ չը կան...
Ո՞ւր են, մէրիկ ջան, իմ սէր տենչանքի
Երազ ցնորքներ—նոցա դերեզման...

Կորել են, կորել անյետ, անգիւման...
Ու սէր, ու տենչանք թափուել են, թօշնել
Աշնան թառամած թփերի նման,
Ու ես եմ միայն ու ես իմ վշտեր...

Ականջ դիր մէրիկ, սգւոր էս սրտի
Ահեղ փոթորկին, կայծակ-որոտին...
Եւ ո՞րքան սև է ջիւան իմ կեանքի
Թխպոտ հեռաստանն արնոտ ու մթին...

Է՜հ, կերթամ մէրիկ, կերթամ շատ հեռուն,
Աշխարհն էլ թողնեմ ու կեանքս ողբամ...
Երաղ մոռացման կամարը անհուն
Կանչում է հեռուէն... ա՜խ, երթամ, երթա՜մ...

Լաց մի լինիր դու անուշիկ մէրիկ ջան,
Քեզնից կ'հեռանայ քո ազիզ բայէն...
Լաց մի լինիր դու... ա՜խ, կեանքս է ջիւան...
Թողնում հեռանամ սև յաւ աշխարհէն...

Ի.

Դէպի ձեզ հաբաղատ եղբայրներ,
Զարչարուող փուշ-կեանքի լծի տակ,
Դէպի ձեզ եմ գալիս խոհ դաշտեր
Վեհ անտառ ու գարնան արեգակ...
Օ՜, ձեզ մօտ է աղատ ու անդորը,
Ուր բուրում են ալ-վարդ ու ալբալ,
Ուր փայլուն ծաղիկներ ժպտածոր,
Եւ ծփում են արտեր վառ ի վառ...
Օ՜, այդտեղ, ստուերում թփերի,
Ուր երգում է սոխակն անմահ,
Ուր թափվում է նուազ դիմիւռի,
Գեղ-բուրում վարդենին ու շուշան,
Հով ու զով է, հանգիստ ու դատարկ...
Ջա՜ն աղբիւր, միշտ նստեմ քեզ լսեմ,
Հմայիչ է մեղմուշ քո քնար,
Ու անվերջ քեզի հետ արտասուեմ...

ԻԱ.

Կուզէի այժ լինել,
Եւ նման կայծակի
Վառվռել, գալարուել
Եւ թափով շեշտակի
Մեծ ելթերը պատռել
Եւ հասնել վեհապանծ
Այն գահին երկնքի,
Ուր բազմած է Աստուած
Եւ յաւին սև-կեանքի՝
Կաշկանդող մարդկութեան,
Անդ լինել համարձակ
Ցայտարար ու թարգման...

ԻԲ.

Օրուայ ծանր հոգսերը կրծքիս,
Վշտաշատ, թուլացած էր հոգիս,
Երբ հաղիւ մոռացուած քուն մտայ
Ու ցնոր երազում քեզ տեսայ...

Սիրաշատ քո դէմքով մօտեցար
Սկսեցիր վշտերն իմ ամոքել,
Զոյեցիր կուրծքը իմ ցաւագար,
Դրդեցիր ինձ յուսալ ու ձգտել...

Եւ այն սուրբ երազում, հոգուս քոյր,
Անուրջոտ մեր սիրոյն ի նշան
Մենք առանք իրարից մի համբոյր...
Ա՜խ, ինչու այն վայրկեան էր միայն...

ԻԴ.

Ես շատ վաղ դուրս եկայ մանկական հասակից,
Ես շատ շուտ դիմեցի դէպի վեր, դէպ առաջ.
Վաղաժամ ծաղկեցին տենչ-պատակ յուսալից,
Շուտ դերուեց անուրջով իմ հոգին նոքաբաց։

Դեռ մանուկ օրերին հրաղում էի ես
Այն շողոտ աստղերում իմ վառ աստղը տեսնել...
Դեռ մատաղ օրերին կեանքը սուրբ լոյսի պէս
Ինձ կանչում էր առաջ դէպի յոյս, դէպի սէր...

Եւ ուխտում էի ես անուրջոտ երազում
Կեանքի մէջ իմ բախտի վարդ երիսը տեսնել.
Եւ ուխտում էի ես, իմ եղբօր հեկեկում
Ու հառաչն անկաշառ իմ խօսքով սփոփել...

Եւ անվոլոշ ու անմիտ ես առաջ մղուեցի
Կեանքի կոյր սրամաշուկ անողոք կռուի մէջ.
Ու տենչանք-յոյսերիս ես թեւերն այրեցի
Աշխարհի վշտառատ հրդեհումը անշէջ...

Եւ մարեց հոգուս մէջ այն կրակը շողոտ,
Որ կռուել էր դրդում ինձ յանուն մարդկու-
թեան...
Զուտ յոգնեց աշխարհում մատաղ կուրծքս տեն-
չոտ,
Ուաղ թոյլ եմ հիմայ, թոյլ, անզօր անսահման...

ԻԴ.

Աշերումս թէև քարացած է արցունք
Անկարծան ժայռի պէս,
Սև-կեանքի խաւարից մանչում են ցուրտ, բուք.
Վշտի ծով փրփրադէզ,
Եւ թէկուզ կայծակներ ու որոտ մէջ ընդ մէջ
Բռնկվում են դլխիս,
Բայց կրկին հաւատալ եմ ուզում ես անվերջ
Վառ աստղին իմ ազգիս...

Եւ թէպէտ դեռ հեռու են գալուստը գարնան
Ողջունող թռչունները.
Ու լսվում են ամպուլ լաց ու կոծ ու դաժան
Սև բախտի հարուածները,
Եւ սարսափանք համարուող դաշտերից պատաղին
Կարկաչում է արիւն,
Բայց դարձեալ իմ ազգի մշտավառ սուրբ աստղին
Հաւատում եմ անհուն...

Եւ ինչումն է իմ վիշտը. սարեր մժապատ
Այդ չասէք, ես գիտեմ
Հայրենիքս է անտէր ու եղբայրս է հիւանդ,
Ես անզօր՝ պիտ լռեմ...
Եւ որպէս փոթորկից հալածուած մի թռչուն
Միշտ անտուն ու անտէր.
Փուչ բախտի լծի տակ պիտ երգեմ ես անհուն
Ցգաւոր իմ երգեր...

Ճրջապատս դժոխք, վիշտ-հեղեղ փրփրալից,
Աչքիս դէմ գերութիւն.
Ես ուզում եմ երգով խորտակել վշտալից
Այս կամարը դժգոյն...
Արցունքի ժայռի վրայ ինձ համար չորացած
Իմ յոյսին հակառակ,
Եւ տենչում եմ հոգով դէպի լոյս, դէպ՝ առաջ։
Դէպի սուրբ արեգակ...

Ես դնով տանջանքի հաւատալ եմ ուզում
Ճշմարտին ու լոյսին-
Հաւատում եմ անկեղծ, որ մի օր այս կեանքում
Սուրբ սիրոյ վեհ հոգին

Կը տիրէ իջնելով այն լաղուր երկնքից...
Ես գնով իմ կեանքի
Հաւատում եմ անկեղծ երևող մշուշից
Վառ աստղին իմ աղգի...

ԻԵ.

Փափագում ես հանգիստ դու դանել մունջ-
յուէտ,
Անտառում սուրբ հանգիստ սև՞ մահուան լուռ
զրկում.
Ես յոգնած եմ թէկուզ, բայց, ընկեր, քեզի հետ
Այսքան վաղ աշխարհից անջատուել չեմ ուզում...

Օ՜, երբէք. սուգ-մահից չեմ ստրսում ես իսպառ,
Ոչ, մի այլ թախիծով է լցուած իմ հոգին.
Երթնանում են իմ մէջ անուրջներ սակէվառ,
Քեզ յիշում եմ, սիրում հայրենիք սրտագին...
Եւ թէկուզ հէնց մատաղ օրերից ես անտէր
Երէրուն ու անտուն եմ եղել կեանքի մէջ,
Թէև վաղ եմ զրկուել ես մօրից թանկագին.
Թէկուզ թոյն, սուգ-մրուր եմ ծծել ես անվերջ,
Եւ սակայն ես յուէտ
Աշխարհից անջատուել չեմ կարող քեզի հետ..,

Դաման արցունքը թէև անկոծան ժայռի
պէս
Բարացած է կրծքիս խորանում վշտալից.
Եւ կեանքի վշտի ծովը ահեղ, փրփրաղէզ
Տենչ-ըղձեր հանդցրել, ու խլել է ինձնից,
Բայց բոխոին հակառակ, դէմ առ դէմ տան-
ջանաց,
Ես ապրել եմ ուզում, կեանի մէջ միշտ ապրել,
Ու ձեռիս դրօշակ, հայրենիք իմ ճնշուած,
Ես կուզեմ ծաղկազգեստ քո դարունը տեսնել...
Չէ, ընկեր, չեմ կարող
Մոռանալ հայրենիք ու արև սոկնշող...

Թող գլխիս գալարուին կայծակներ, շէկ-
շանթեր,
Թող հողմեր չարաշունչ ու դժգոյն մռնշան...
Կեանք կուզեմ ու արև եմ ուզում անվեհեր,
Կրոստանեմ ես աղտոտ սուրբ դարման գալստեան...
Չէ, ընկեր սրտակից
Անջատուել չեմ ուզում ես կռիւ-աշխարհից...

ԻԶ.

(Նմանություն)

Ա՜խ, կեանքս թօշնեց, ըղձերս կորան,
Տենչանքը սիրուս, երազ անուրջներս
Հեռացան աշնան հաւքերի նման,
Եւ մեն-միայն ենք ես ու իմ վշտերս...

Գարնան ու լոյսի ցոյները ու ցոլքերը
Կեանքի ափերից քրքիջով կուգան...
Ու ինձ օտար են խնդութեան ձայները,
Մարած է սիրտս մոխիրի նման...

Սե՜-սե՜ մժի պէս հողմերի թևին
Աշխարհը մոռցած, թողնեմ ու երթամ...
Ցաւերս յանձնեմ սև-ցաւ աշխարհին,
Իմ կեանքն ու սէրը ողբամ ու երթամ...

Իկ.

(Թարգմ.)

Մանիշակը կէսքուն
Ու շուշանը յոգնած.
Ալ-վարդի հետ սիրուն
Ծարաւով պապակած՝

Սեաթ-ոյը ամպերին
Աղերսում են ցոյել
Ջերմակէզ գաշտերին
Արծաթ-ցող ու ստուեր...

Հմայիչ-անվրդով
Ու գանգուր-ձիւնափթիթ
Մժ-ամպերը զով-հով
Կոնաւորախ-խոտաստիրտ,

Լալու ջինջ լազուրից
Լուռ ճամբայ են գնում...
Ու երկրին վշտալից
Մոռնալ չեն ուզում...

ԻԸ.

Սիրտ իմ վշտակոծ, դարուն է եկել,
Բացուել բուրում են ալ-բալ ու ալ-վարդ.
Ժպիտ-սակեղօծ շոգում են արտեր,
Կանաչ է հագել հովիտ ծաղկազարդ...

Սարէն ու ձորէն արծաթ վտակներ
Ցնծուղ շիթերով վազում են հեռուն.
Զուլալ աղբիւրի գլգլան ջրեր
Համբոյր կարկաչով երգում են դարուն..

Խումբ-խումբ ու ծիւ-ծիւ էն ցուրտ աշխարհէն
Գալիս են ահա հաւքերը մեզ մօտ,
Ձեզ հազար էրնէկ, հաւքեր սիրալից,
Ազատ էք, չունէք ցաւեր ու կարօտ...

Սիրտ իմ վշտակոծ, դարուն է եկել,
Ալ-վարդն է ծաղկել, շողում բուրաւէտ...
Թողնում սուգ-աշխարհ, մտնում սև՛ հոգսեր,
Ընկնում սար ու ձոր, շրջում ես յաւէտ...

ԻԹ.

ԵՐԳԻ ՏԵՆՉԸ ՄԱՐԱԾ Է ԻՄ ՄԷՋ...

Երգի տենչը մարած է իմ մէջ.....
Ոչ անեղը ծովի ջինջ-կապոյտ հեռաստան,
Ոչ աղմուկը ալեաց ցոյ-ցնծուղ շիթային,
Որ երաշ անուրջում է ժամին երեկոյեան,—
Զեն դիւթում, կախարդում քնարն իմ ոգբուգին...
Երգը չէ կրակ-ցո

սրտիս.
Օ, քնար արիւնոտ,
Այլ ցաւով է խանձվում վիշտ հոգիս,
Նա կուռի է կարօտ...

* * *

Երգի տենչը մարած է իմ մէջ.....
Ոչ անափ, անկոպար լազուրի խորութիւն,

Ոչ ցնոր երազում ընկղմուած ցիր ու ցան
Այն աստղերը շողում էին երբ, որ անհուն
Լռութեամբ կերսոնները են մահուան,
Չեն դիմում զրաւում իմ քնար...
Այս վհատ օրերին
Այլ վշտեր են մաշում ցաւագար
Ու յոգնած իմ հոգին...

*
* *

Երգի տենչը մարած է իմ մէջ.....
Ոչ մատաղ արշալոյսը ժպիտ-գեղագէմ,
Որ վառ-վառ հրդեհում է աշխարհը կէսքուն,
Ոչ սգւոր անտառի խոր մրմունջը վսեմ,
Որ սօսաւ-կոհակով տարածւում է հեռուն,
Չեն կոչում, կախարդում իմ քնար...
Այս գժսիք օրերին
Այլ ցաւով է սգում տանջահար
Վշտակոծ իմ հոգին...

*
* *

Երգի տենչը մարած է իմ մէջ.....
Շշշ... աղմուկ է լսւում. այդ հառաչն է, կսկիծ

Վշտայոյզ իմ եղբօր՝ սև-բանտի անկիւնում.
Այդ կարկաչն է արեան որ կեանքի տիեզից
Բքքիջով զէպ՝ հեռուն, զէպի ծովն է սահում...
Ի՞նչ կանէ ունայն երգը այսօր...
Պիտ անզուլ մաքառել.
Հարկաւոր է արցունք արնածոր,
Որ ծով-վիշաք ծծել...

Լ.

Մայիսն եկաւ հով ապեց,
Էրուած սրտիս դով ապեց.
Դաշտ ու հովիտ զաւ հագած,
Ձայիր-չիման մեզ բերեց...

Բարով մայիս, ալ-մայիս
Դարման ապիր սուգ-սրտիս
Քեզնէ ուղած էն շուշան
Եարար բերիր իմ եարիս...

Նախշուն մայիս, ջան մայիս,
Կաց, իմ դարտից խարար տամ...
Սէր տուր, լոյս տուր սև սրտիս
Ջիւան կեանքից վարամ տամ...

ԼԱ.

Աղբիւրի մօտ քուն մտայ,
Փէրին եկաւ, ջուն առայ.
Ալ-վարդ, ալ-վարդ ծաղիկներ
Նստանք մի-տեղ ես ու նա...

Աղբիւրի ջուր, անոյշ ջուր
Հով-զլզլան կը վազնէր...
Վարդին թառած գեղ-բլբուլ
Անոյշ-անոյշ երգ կասէր...

Հովիկ-զովիկ կը փչէր,
Նա բլբուլին դամ կուտար.
Եարիս մազեր սրբիշում
Ասես տաղլի ժամ կուտար...

Աղբիւրի մօտ քուն մտայ.
Փէրին եկաւ, ջան առայ
Ալ-վարդ, ալ-զարդ ծաղիկներ
Նստանք մի-տեղ ես ու նա...

ՀԱՅԿ. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՐԻ
ՅՈՒՍԻՖ ԴԱՄԵՆՑ
ԳՐԱԴԱՐԱՆ
Ա.ԿԱԴԵՄԻԱ.

ՍՏԱՑ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ ՀԻՄՆ. 1894 ՆՈՐՈՒՆ. 1909 Тифл.
основ. 1894 нов. пер.
БИБЛІОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кавк.

10 դ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0040991

A I/5594
ՄԵԿ
ՕՐԻՑԱԿ